

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ե Ս Դ Ի Բ Գ Ի Դ Գ Ի Բ Ե Ր Ե Ր Ո Ւ Ն Ի

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄՆ \$ 5 40 Գ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մեջ.
Մեր հասցեն Թիֆլիս, редакция «Мшакъ»
Базарная ул. д. Тамашева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ Է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատէղին 10 կոպէկ.
Տ Է Լ Է Փ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊՐԵՐԻՍ ԲԱԺԱՆՈՐԳԱՐԱՌԹԻՒՆ
25 ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հ ա ս զ յ Ն
ТИФЛИСЬ, редакция «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՁԵԻ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ԲՈՒՐԻ

Ամսական ՄԷԿ ռուբլի
Ամսական տարեկան 6 ռուբլի
Եւրոպայի 30 ֆրանկ
Պարսկաստան 10 ռուբլի
Հասցեն փոխելու համար պէտք է
ուղարկել 40 կոպ.

Սեպտեմբերի 27-ին, ցեղեկվայ ժամը 4 1/2-ին վախճանվեց Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ ԵԿՐՈՐ ՍԵՐԳԻԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի կինը և եղբայրները, կնոջ մայրը, եղբայրներն ու բոլորը:
Ամբիջը հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերը՝ երեկոյան ժամը 7-ին:
Յուզարկաւորութիւնը հանգուցեալի ընկերային (Սեմինովսկայա փ. № 16) կիրակի, հոկտեմբերի 5-ին, առաւօտեան ժ. 10-ին, դէպի Վանքի մայր եկեղեցին:
(Կ. Տ. Ու. 2. Կ.)

ՍՏԱՍՆԱՐԱՅԻ

Մ. Գ. Դ ա ն ի լ - Բ Ե Կ

Ընդունելու՝ Առաւօտեան 10—2 ժ.
Թիֆլիս՝ Երեկոյան 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., о. № 7.
(Տ. Շ.)

ԹԻՒՐԻՍԻԱ ԵՒ ԱՋԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ *)

II

Անցեալ անգամ մենք ցոյց տուինք թէ ինչ հայրենասիրական ցնորամիտ տենչեր ունեն թիւրք հայրենասէրները և խոստացանք ցոյց տալ նաև, թէ ինչ պահանջներ ունեն թիւրք քաղաքացիական ռազմերը:

Այդ կուլտուրական կամ կուլտուրայի ընդունակ ազգերի մէջ, որոնցից բաղկացած է թիւրքերն, առաջնակարգ տեղ են գրաւում յոյները: Յոյները և կուլտուրայէն և թաւաքէն աւելի զօրեղ են հայերից և մինչև այսօր բաւական մեծ արտօնութիւններ և առանձնաշնորհներ էին վախճում թիւրքաց կառավարութեան կողմից: Այդ արտօնութիւնները օրցօր բարձրանում էին: Նրանք ստացան եկեղեցական կատարելաւ աւստօսիկ և յունաց պատրիարքարան ձեռք բերեց իրաւասութիւն և զուտ քաղաքացիական գործերի մէջ: Վէճերը ժամանակակից կատարելում էր յունարէն, իսկ բարձր կրթութեան համար յոյները իրանց գաւառներին ուղարկում էին Աթէնք: Առհասարակ յոյները շատ լաւ էին ապրում հին ըէփիմի օրով, երբ միւս ազգերը, օրինակ հայերը, սոսկալի հայաժանքի էին խնայարկվում: Դրա համար էլ յոյները ամենից քիչ թշնամաբար էին վերաբերվում հին, բացարձակ, բռնապետական ըէփիմի, ուստի և գրեթէ ոչ մի մասնակցութիւն չէին ունենում յեղափոխական շարժման ամբողջ ծանրութիւնը ընկնում էր ուրիշ ազգերի վրա:

Բնական է որ, այժմ, երբ երկրաւոր-թիւրքերը պահանջ են դրել, որ օսմանեան կայսրութեան մէջ առանձին ազգերը ոչ մի առանձին արտօնութիւն չը պէտք է վայելին, այլ բոլոր ազգերը իբրև քաղաքացիներ մի կնոյն պետութեան, պէտք է ունենան միևնույն հաւատարմ իրաւունքները և պարաստութիւնները, յոյները մեծ դժկամակութեամբ ընդունելին այդ պահանջները: Նրանք շտապեցին յայտարարել, որ իրենց հաւատարմ իրաւունքները և պարաստութիւնները չեն կորցնում:

Սեպտեմբերի 27-ին, ցեղեկվայ ժամը 4 1/2-ին վախճանվեց Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ ԵԿՐՈՐ ՍԵՐԳԻԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԸ, որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի կինը և եղբայրները, կնոջ մայրը, եղբայրներն ու բոլորը:

Այդ կուլտուրական կամ կուլտուրայի ընդունակ ազգերի մէջ, որոնցից բաղկացած է թիւրքերն, առաջնակարգ տեղ են գրաւում յոյները: Յոյները և կուլտուրայէն և թաւաքէն աւելի զօրեղ են հայերից և մինչև այսօր բաւական մեծ արտօնութիւններ և առանձնաշնորհներ էին վախճում թիւրքաց կառավարութեան կողմից: Այդ արտօնութիւնները օրցօր բարձրանում էին: Նրանք ստացան եկեղեցական կատարելաւ աւստօսիկ և յունաց պատրիարքարան ձեռք բերեց իրաւասութիւն և զուտ քաղաքացիական գործերի մէջ: Վէճերը ժամանակակից կատարելում էր յունարէն, իսկ բարձր կրթութեան համար յոյները իրանց գաւառներին ուղարկում էին Աթէնք: Առհասարակ յոյները շատ լաւ էին ապրում հին ըէփիմի օրով, երբ միւս ազգերը, օրինակ հայերը, սոսկալի հայաժանքի էին խնայարկվում: Դրա համար էլ յոյները ամենից քիչ թշնամաբար էին վերաբերվում հին, բացարձակ, բռնապետական ըէփիմի, ուստի և գրեթէ ոչ մի մասնակցութիւն չէին ունենում յեղափոխական շարժման ամբողջ ծանրութիւնը ընկնում էր ուրիշ ազգերի վրա:

Բնական է որ, այժմ, երբ երկրաւոր-թիւրքերը պահանջ են դրել, որ օսմանեան կայսրութեան մէջ առանձին ազգերը ոչ մի առանձին արտօնութիւն չը պէտք է վայելին, այլ բոլոր ազգերը իբրև քաղաքացիներ մի կնոյն պետութեան, պէտք է ունենան միևնույն հաւատարմ իրաւունքները և պարաստութիւնները, յոյները մեծ դժկամակութեամբ ընդունելին այդ պահանջները: Նրանք շտապեցին յայտարարել, որ իրենց հաւատարմ իրաւունքները և պարաստութիւնները չեն կորցնում:

նեկ իրանց որոշ պահանջները, բաղկացած հետեւեալ 5 կէտերից. 1) պահանջութիւն բոլոր այն իրաւունքներին և արտօնութիւններին, որոնք շնորհվել են յոյներին սուլթանների ձեռքով, սկսած Ալիարականից մինչև 1856 թ. Սաթթը-Հիւսայունը և 1876 թ. սահմանադրութիւնը: 2) դպրոցը, թէ ըստորին և թէ միջնակարգը, պէտք է լինի ազգային, այն էլ յունական և նպատակաւ պետութիւնից: 3) պարտաւորման, միջնակարգի և վարչական մէջ պրօպագանդային ներկայացուցչութիւն, այսինքն պատգամաւորների ընտրութիւնը պէտք է կատարվի ըստ ազգութիւնների և առանձին մի ազգ, համեմատ իր թիւին, պէտք է ունենայ ներկայացուցչներ: Նոյն համեմատութեամբ յունական ազգը պէտք է ներկայացուցչներ ունենայ միջնակարգի և վարչական մէջ: 4) այն վայրերում, ուր յոյները ազգաբնակչութեան մեծամասնութիւնն են կազմում, յունաց լեզուն պէտք է նշանակուի պաշտօնական լեզու ճանաչվի, ինչպէս և թիւրքաց լեզուն:

Այս պահանջները այնքան մեծ են, որ, բնականաբար, պէտք է զրգռելին թիւրքերի դժգոհութիւնը, որոնք այդ պահանջների մէջ տեսնում են խախտում պետութեան միութեան: Կարելի է ասել, որ այդ պահանջները նոյնքան ծայրայեղ են և չափազանց, որքան երկստապող-թիւրքերի ձգտումը կազմել բոլոր ազգութիւններից մի օսմանեան ազգութիւն:

Տեսնենք այժմ ինչ պահանջներ ունեն հայերը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 28 սեպտեմբերի
Թագաւորը այսօր Բուկինհէմի պալատում ընդունեց Իգլիսլիւսիւս: Սբ. Չարլզ Հարրիսը առաւօտեան ճաշեց թագաւորի մօտ, որը յետոյ ընդունեց սբ. Գրէյսին:

Թագաւորի խոսակցութիւնը միջնատր Իգլիսլիւսի հետ տեղեց երեք քառորդ ժամ:
Իգլիսլիւսի և կոմս Բենկլէյնօրֆի նախաձեռնեցին Ուէլսի պրինցի մօտ Մայքորօֆօուլում:

Բուկինհէմի պալատում ճաշին ներկայ էին թագաւորը, Իգլիսլիւսին, Բենկլէյնօրֆի և դեսպանատան խորհրդատու Պոլիէվսկի-Նոգէլը: Յերեկով Իգլիսլիւսին այցելեց մի քանի դեսպաններ:

Այսօր առաւօտեան վախճանվեց նախկին դեսպան սրբ. Հէնրի Իրուսմոն-Վոլֆը:

Լոնդոն, 29 սեպտեմբերի
Միջնատր Իգլիսլիւսին այցելեց դերմանական դեսպանին: Կէտորից, յետոյ նա կրկին կը տեսակցի Գրէյսի հետ:
(«Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 28 սեպտեմբերի

Այսօր տեղի ունեցաւ մարզաբեմի վերաբերուի երկրպագելու արարողութիւնը: Սուլթանը նաւակով եկաւ Էսկի-Սէրայ, որտեղից գնաց Այա-Սօֆիա: Այնուհետև սուլթանը Էսկի-Սէրայում ընդունեց բարձրաստիճան պաշտօնեաներին և պրինցիներին, որոնց ներկայութեամբ ճառ արտասանեց, հաստատելով սահմանադրութեան անսասանութիւնը: Այնուհետև կրկին նաւակով սուլթանը մեկնեց Երզրէզ-Բեօշլի: Սահմարում նրան ողջունեցին ցնծութեամբ:

Պէրայում բօսնիացիների և մահմեդականների ամբողջ կրկին համակրական ցոյց տարեց, ուստաց, անգլիական և ֆրանսիական դեսպանատների առաջ:
(«Հ. Գ.»)

Կանէա, 29 սեպտեմբերի

Պատգամաւորների պալատի նստաշէջում տեղեց: Մահմեդական պատգամաւորները բացակայում էին: Պատգամաւորական խօսքը կրեաւ Յուսուստանին միացնելու մտքով:
(«Հ. Գ.»)

Սօֆիա, 29 սեպտեմբերի

Բօլզարական գործակալութիւնը հաղորդում է, որ Ֆերիդինսկի թագաւորի գալուստան առթիւ ջաղաքը գեղեցիկ կերպով դարձրւում է դրօշակներով, գորգերով և ծաղիկներով: Բօլզարի ձեռնիքի մուտքը զարդարված է յաղթական կամարով, որի մի երեսին գրված է Օմանը, թագաւորը, միւս երեսին՝ «Ժողովուրդը քեզ հետ է»:

Կանէա, 29 սեպտեմբերի
Թագաւորի գնացած ճանապարհին երկշար կանգնած էին Սօֆիայ բոլոր զօրքերը, ընկերութիւնները իրանց դրօշակներով, ուսանողները, աշակերտութիւն: Ապատարար Կայրի արձանի շուրջը տեղաւորվեցին զարդաքանդակ անիւներ, ժողովրդական ժողովի նախկին միջնատրները և նախապահները: Պատգամաւորութիւնները, հոգեբարեկամութիւն և բարձրաստիճան մեծաւորները սպասում էին թագաւորին տաճարում, իսկ սրա մուտքի մօտ՝ օֆիցիէրները:

Թագաւորն եկաւ ժամը 3-ին, իշաւ գնացելից, մտաւ Բօլզարի ձեռնիքը, ուր նրան ընդունեցին գեներալները և զօրքերի հրամանատարները: Ժամը 4-ին թագաւորը ձիով մտաւ քաղաքը շրջապատված օֆիցիէրներով: Երկու բարձրաստիճան պարզեցին 31 թիւղանոթ: Երաժշտական շուքում էր այդ օրվան համար պատրաստած յատուկ քաղաքը: Քաղաքապետը մատուցեց աղու հաց: Հանդիսին ներկայ էին մօտ 50,000 մարդ:
(«Հ. Գ.»)

Հոֆ, 29 սեպտեմբերի

Տիւրքերի և բարձր իշխանութիւնների ներկայութեամբ կապիտալայում բացվեց բանտերին տարանվագելու 8-րդ միջազգային կոնգրէսը: Կոնգրէսը բացեց առեւտրի միջնատր Կոկիորտին ողջոյնի ճառով:
(«Հ. Գ.»)

Կոպենհագեն, 29 սեպտեմբերի

Թագաւորը շատատեղ միջնատրութեան այս կազմը. — միջնատր-նախագահ և պետական պաշտօնակալները միջնատր նշանակվում է ֆինանսների աշխատանքի միջնատր Բենկլէյնօրֆի, Կուլտերի միջնատր՝ Մերէնզեն, արդարադատութեան Գերսթորօ, ճանապարհների հարցաւարութեան Սենդերտու, երկրագործութեան Նիլսեն: Բոլորն էլ նախկին միջնատրներն են: արտաքին գործերի միջնատր նշանակված է կոմս Ալֆրէդսոնը: Երեքին գործերի՝ Բերտսեն, առեւտրի՝ Գանզեն, ֆինանսների՝ Բրուն:

(«Հ. Գ.»)

Բերլին, 29 սեպտեմբերի

Նորդենբըրգ եկաւ պետական կանցլէր Իշխան Բիւլովը:

(«Հ. Գ.»)

Տոմսկ, 28 սեպտեմբերի

Տիւրքերի և բարձր իշխանութիւնների ներկայութեամբ ինստիտուտի ուսանողների ժողովը 839 ձայնով ընդունեց:

(«Հ. Գ.»)

դէմ 16-ի (132 ձայնաւոր հնազանդ) որոշեց գործադուլ անել: («Հ. Գ.»)

Բերլին, 28 սեպտեմբերի

«Norddeutsche Alg. Zeit»-ի շաբաթական տեսութեան մէջ գրում է. «Ամենին չէ կարելի խուսափել այն տպաւորութիւնից, որ մենք ապրում ենք մի ճանապարհի մէջ, որի ծանրութիւնը պահանջում է եւրօպական դիվիզիոնալի ուժերի աշխատանքը: Եւրոպայի առեւտրի փլուզումը, որ հանգում է բոլոր պետութիւններին այն ընդհանուր շահերին, որոնք կապված են դրութեան խաղաղ զարգացման հետ: Բալկանների վրա Արդեօս կոնֆլիկտից կը պահանջվի թէ կոնգրէսը — այդ հարցին դեռ չէ կարելի պատասխանել: Յամենայն դէպս մենք սխալված չենք լինի, եթէ ենթադրենք, որ Գերմանիան կը համաձայնի կոնֆլիկտից հրաժարուի միայն այն դէպքում, եթէ կը համոզվի, որ բանակցութիւնները կը վարվին բարեացակամութեամբ: Գերմանիան, նրան զօրեղացնելու նպատակով և խուսափելով ստորացնել օսմանեան կայսրութիւնը, որ առանց այն էլ ենթարկված է արդէն շատ փորձանքերի: Եթէ որեւէ պետութիւն իրաւունք ունի առեւտրական Թիւրքիայի անկողնէն բարեկամ — դա Գերմանիան է: Դրա ապացոյցները կարելի է գտնել պատմութեան մէջ, և իւրաքանչիւր ոք, որը գտնէ հարկանքի կերպով հասկացողութիւն ունի արեւելեան հարցի մասին, դիտել, որ մեզ յաճախ մեղադրում էին մեր բարեկամական յարաբերութեան համար դէպի Թիւրքիան հէնց նրանք, որոնք այժմ զբաղւում են նախապիւր բարեկամական դրութեան: Գերմանիան քաղաքականութեան միջոց զիջակամութեամբ էր այն նպատակետով, որ իւրաքանչիւր և դրա դաւանող ժողովուրդներին հետ յարաբերութիւնները ունենային մենք որոշ ունենք կենդանի և զարգացման ընդունակ ոյժի հետ, որ սխալ է մահմեդական պետութիւնների մասին ունեցած նախապաշար, թէ նրանք կորստի են մասնավոր: Մահմեդական իշխանութեան Թիւրքիային Գերմանիայում գոհանալութեամբ տեսանք որ նպատակը հաստատութիւնը՝ թէ այնտեղ կարող է ծաղկ ծաղկանալից ոգին: Մենք վճռականապէս բողոքում ենք լաւ հաշուած դիտարկութիւններով տարածվող այն հաւատարմութեանը, որ թէ մի Գերմանիան վտանգութիւն էր տալով բացառապէս դէպի հին ըէփիմի և օսմանեան կայսրութեան թշնամի դաժաւ, երբ վերջինս ուղեց վերանորոգել իր պետական հիմնարկութիւնները: Մենք առաջնայ պէս համոզված ենք, որ նոր ըէփիմի վիճակված է ազատիլ օսմանեան կայսրութիւնը ներքին անկարգութիւններից: Եւրոպայում կը հերքեն այն մտայն նախադրականութիւնները, որ իբր թէ վերջին դէպքերի հետեւեցը լինելու է կատարական և իշխանութիւնների անկումը Կ. Պոլսում: Հասկացութիւնը և պետական մարդկանց վայելի հնապատիւնը, որ ցոյց տուին նրանք այս օրերս Կ. Պոլսում, ուժեղացնում են վտանգութիւնը, և մենք պատրաստ ենք հաստատել, որ յարաբերութեան մեր բարի յարաբերութիւնների վրա դէպի Թիւրքիան պէտք է խորտակվին թիւրքական պետական մարդկանց առողջամտութեան և իբրեք իրական համապարհութեան դէմ: Այժման գրութեան հանգիստ քննութիւնը, մեր կարծիքով, այն եղապատկերութեան պէտք է ընել, որ Թիւրքական պետութեան կործանը, որքան էլ տխուր լինէին այս շաբաթվայ դէպքերը իւրաքանչիւր հայրենասէր-օսմանեան համար, անհրաժեշտ է մնալ թիւրքական կազմը կը դնէ ներքին զարգացման, զօրքերի ուժեղացման, ազմիջնատրացիան թաւաքելու և անտեսական խնդիրները վճելու համար, այն ժամանակ իր ոյժի անմահ մէջ կը գտնէ իր անկողնէն բարեկամներին համար ցանկալի արեւուտը կորստի: Մենք խոսում ենք ոչ թէ արդարացիութեամբ այն գործողութիւնները, որոնք դէմ թիւրքական կազմը է դաժապակել: Մեր հիմնական նպատակը մէջ զաշնագրիները գործարկելու անհրաժեշտութեան վրա մենք ամենեւին չենք հետնում այն նպատակները, որ Գրէյս բացառել է ընտրողների առաջ իր ճառի մէջ: Մենք կը ցանկանալինք կարծել, որ երբ իրերի դրութեան մասին սկզբունքային տարաձայնութիւններ չը կան, գործողական կողմից ոչ մի թշնամութիւն չի առաջանալ: (ապագա)

դրութեան: Գերմանական և անգլիական մատուլ մի (մասը ?) վերջին օրերս խօսում էր մեր զաշնակցների դէմ: Ներկայ դէպքում մենք գործ ունենք մի այնպիսի օսման հետ, որը էական կերպով որոշում է մեր ընթացքը այդ հարցերում: Հասկանալ այդ օսմանը պարտաւոր են հէնց օրինական անգլիացիները և Արեւելքի շէնարկները — թիւրքերը: Մենք խօսում ենք մեր զաշնակցական յարաբերութիւնների մասին դէպի Աստուր-Ունգարիան: Մենք կարող ենք մինչև անգամ, ի նկատի ունենալով մեր յարաբերութիւնները դէպի զաշնակց պետութիւնը, անյարմար գրութեան մէջ գտնվիլ որպէս երբեմն լինում է ըստ քաղաքական հանգամանքների: Սակայն դա չը պէտք է արդէն մեզ անկողնէն ընկերակցութիւն ցոյց տալ զաշնակցին և այնպիսի հարցերում, որոնք մեր զաշնակցական պայմանագրի առաւելալ չեն կարող մտնել: Նոյն բանը մենք յաճախ փորձել ենք և նրա կողմից: Մի կողմից մենք կարծում ենք, որ այն նպատակին համեմատ համար, որ անհրաժեշտ է համարվում առաւօրուհարական պետական շահերի տեսակէտից, անկողնէն պետական կը լինէին զօրաւորութիւնները գործունէութեան այլ կերպի ժամանակ, բայց միւս կողմից խոստովանում ենք, որ Աստուր-Ունգարիայի ցանկութեամբ՝ վերջնականապէս կանոնաւորել օսմանական հարցը, հիմնաւոր է: Այլ կերպարանք ունի քաղաքական կառավարութեան քայլը: Մենք չենք կարծում, որ Բերլինում հակամէտ լինէին վաւերացնելու նրա գործողութիւնները և ճանաչել Բօլզարիայի անկախութիւնը, մինչև որ տեղի չէ ունեցիլ գոհացնող համաձայնութեան: Թիւրքիայի հետ երկաթուղիների հարցի վերաբերմամբ: Այդ, ի հարկէ, ինքն ըստ իրենց: Սակայն Արեւելեան-Ռուսիայի համար և պարտաւոր կը լինի այնպիսի բաւարարութիւն առաջ Թիւրքիային, որպիսին վերջինս համապատասխան կը գտնի: («Հ. Գ.»)

ԲՈՒԴԱՐԻՍԻ ԱՋՍՈՒԹԻՒՆԸ

Սօֆիա, 23 սեպտեմբերի

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՊԼՈՄԱՏԻԱԿԱՆ ՇՐՋԱՆ-ՆԵՐՈՒՄ

Ճշգրիտ աղբյուրներից մեզ հաղորդում են, որ Բոլշակովի անկախության հրա-տարարումը անսպասելի չէր սուսաց առ-տաղիս գործերի միջնադարի համար։

Ընդհանրապես, մեր դիվլոմատիան օրե-ցօր սպասում էր այդ ակտին։

Մեր միջնադարի մեջ կարծում են, որ Բոլշակովի թագադրությունը հրատա-րակելը տեղի է ունեցել Աստուր-Ունգա-րիայի ազդեցության տակ։

Ռուսաստանը կատարեալ չէր հաղթում կը յայտարարե միջև անգամ այն դեպ-քում, եթե թիւրքերն պատերազմ կը հրա-տարակե Բոլշակովի դէմ, և ճիշտ չէին այն լուրերը, որ իբր Ռուսաստանը անկախ-թիւն ցոյց կը տայ Բոլշակովի։

Ինչ վերաբերում է Բոսնիայի և Հերցե-գովինայի Աստուրիայի հետ միացնելու փա-սին, այդ բանին մեր միջնադարի մեջ վաղուց սպասում էր։

Մակաչ Ռուսաստանը չի հաշտվի Բոս-նիայի և Հերցեգովինայի վերջնական միաց-մանը Աստուրիայի հետ։

Լուրեր են պտտում, որ մեր արտաքին գործերի միջնադարի մեջ շրջաբերական յայտագրեր է պատրաստում ուղարկելու մեծ պետություններին Բոսնիայի և Հերցեգովի-նայի առիթով։

Այդ յայտագրի բովանդակությունը խիստ գաղտնի է պահվում։ Միայն այն է յայտնի, որ ուստաց կատարությունները առաջարկում է Բոսնիայի և Հերցեգովինայի հարցի քնն-նութիւնը ենթարկել Բոլշակովի դաշնագրերը ստորագրող տերություններին։

(«Вирж. Вѣд»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԽՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻՆ ՊԵՏԻ

Նոր-Ջուլայի մեր թղթակցիցների հաղոր-դում են մեր, որ վերջերս Հ. Յ. Դանիսկու-թեան Պարսկաստանի կոմիտեները և մա-նաստիկ Աստուրիայի կոմիտե կողմէ խմբակ մի ամբողջ արշաւանք են սկսել Պարսկաստանի և Հնդկաստանի թիւի ա-ռաջնորդական փոխանորդ Բագրատ վարդ-Վարդապետին դէմ։ Այդ կոմիտեներ իր անպակաս յանդիմանութիւնը հարցնել է այն աստիճանի, որ պահանջում է առաջնորդ Բագրատ վարդապետից վեր կենալ Նոր-Ջուլայից և գնալ Թէհրան (12 օրվայ ճա-նապարհ)՝ ներկայանալու կուսակցությանը ստորագրած դատարանին, և երբ Բագրատ վար-դապետ Վարդապետն, պահելով իր, իբրեւ եկեղեցականի, նայ ժողովրդի ներկայա-ցուցչի և իբրեւ մարդու արժանապատու-թիւնը, լուծեցանք միայն պատասխանում է այդ անկող և ներքնաստիկայի դատարանի կողմէ կոմիտեի 2-րդ անգամ հրախրա-գիր է ուղարկում նրան, սպանալով, որ եթե այդ երկուսը հրաւերին ևս չը պա-տասխանէ, կոմիտեներ ձեռք կառնի նորկար կանոնական միջոցները։

Հասկանալի է, թէ որոնք են այդ հարկա-տը կանոնական միջոցները. դաշնակցականների պարտիկան այդ կողմից ոչ մի կասկած չէ թողնում։ Ըստ սովորութեան, նրանք կը հնարեն խայտառակ հեռագիրներ, նամակ-ներ, կը հրատարակեն թուղթիկներ, որոն-ցով «մատնիչ և դաւաճան» կանուանեն մի անձի, որ ներկայումս իր մարդը, օգտա-կար և անձնուէր գործունէութեամբ այն-քան համակրութիւն է ձեռք բերել հայ ժո-ղովրդի մէջ, որ չը նայելով իր սոսկ վար-դապետ լինելուն, առաջարկվում է շատերի կողմից իբրեւ կաթողիկոսական երկրորդ թեմիստու։ 25-րդ դարկայնակների զեղծումները, ապօրինի վարմունքները մերկայացնող համարվում է «մատնիչ» և դաւաճան։ «Այդ խուլիկանները չեն քաշ-վի նոյնիսկ» գրում է մեզ Նոր-Ջու-լայի մեր թղթակցիցը, «քաղաք» ֆիդի-քական կողմիս ոյժի դիմել վարդապետի դէմ։

Եւ այս ամենը կատարվում է այն պա-տաւով, որ դաշնակցական մի վարդապետ, խորին անուշով, իր փաստակար և անա-քուր գործերի համար չէ խրախուսում ա-ռաջնորդի։

Տիրապետ Մէլքե-Փանգեանների, Տա-ճատների, Փափագեանների թիւի աւելանում է և մի ինքնու։

Եւ այսպիսի խայտառակ փորձեր թող է տա-լին իր անպակաս կուսակցիցներին գործել մի կուսակցութիւն, որ այժմ թիւրքերայում ճա-ռեր է արտասանում հասարակութեան, ազա-տութեան, արդարութեան, անհատական ա-զատութեան և անձնուէրի իրաւունքի մասին։

Մեզ հաստատում էին, որ Դանիսկու-թեանը ձեռնարկել է իր շարքերի առողջաց-ման և մաքրագործութեան, որ նա լքելով ձեռնարկել է ազատվել այն խուլիկանական տարրերից, որոնք վարկաբեկիցն են նրան ա-նկիւրից, որ նա մտադիր է վերադառնալ այն օրերին, երբ նրա գործունէութիւնը համակրութիւն և անկախութիւն էր գտնում հայ ժողովրդի մէջ։ Միթէ մենք խաբու-ցեմք մեր յոյսերի մէջ։ Ամբէն այդ բոլոր խոստումներից յետոյ տեղի պէտք է ունե-նար Աստուրիայի կոմիտեի խայտա-ռակ վարմունքը։ Վերջապէս, երբ պետք է կուսակցութիւնը հասակայայ այն անհա-տարական ճշմարտութիւնը, որ մի կու-

սակցութիւն, լինի նա լեզալ թէ անլեզալ, իրաւունք ունի առ առաւելու դատի ենթար-կել միայն և միայն իր անգամներին և ոչ կողմնակի անձանց։ Եթէ ձեռք-կանխադրու-թիւնը իրաւունք է տալիս ձեռք բռնանալ մարդկանց վրա, գործ դրէր այդ բռնու-թիւնը ձեռք կուսակցութեան անդամներին և ոչ այլոց վրա։ Եթէ ամեն մի անլեզալ կու-սակցութիւն իրաւունք համարի իրան դա-տել, հասարակութիւնը պէտք է ընդ-նէր բարբարոսութեան շրջանի մէջ ժամա-նակ է խառնի պատմել խուլիկանական ա-րարքները. ժամանակ է դործով ցոյց տալ թէ հասարակութիւն, ազատութիւն, արդա-րադատութիւն կողմնակի իրանքի գիտնի յարգել այդ զեղծիկի սկզբունքները։

Մեզ դաժմացում է, որ Բագրատ վ-Վարդապետն չէ բողոքում այդ խուլիկա-նական վարմունքների դէմ։ Այդ դեպքում, ամբողջ նայ ժողովուրդը, ի դէմս իր ողջա-միտ և ինտելիգենտ շարքերի, կը միանայ նրա բողոքին և իր ձայնը կը բարձրացնէ։ Վատ արարքները մերկայացնելով միայն մենք կը նպաստենք առողջացման և մաք-րագործութեան։

Հ. Ա.

ԱՆՇԵԿԻՐՏԻ ԴՊՐՈՑԸ ԵՒ ԱՆՈՐ ԳՈՅՈՒ-ԹԵԱՆ ԱՆԴՐՈՒՆԵՐԸ

Որչափ որ կը յիշեմ, 1879 թուին մինչև օրս քանի պահանջներ եղած են՝ գաղթա-կաններու համար դրամ հանգանակելու, և ամեն անգամ «17,000 ր.» է առաջ բեր-ված։ Այդ թիւրքերիցները պարզելու համար, որպէս գործին քիչ-շատ ծանօթ, կուզէի մի քանի խօսք բերել։

Գէորգի Կ. կաթողիկոսը Արաշկերտի գաղ-թականներու համար հանգանակած մեծ գումարէն խնայողութիւնը ընելով 16,000 և մի քանի հարեր բուրձի ձգած էր բաւ-կը, որպէսզի այդ փողոյ իրողութիւնը Արաշ-կերտի մէջ դրոց մը բացուի։ Պատերազ-մէն առաջ ինչպէս որ պ. Մկրտիչ Փոթ-թուգլանի նախաձեռնութեամբ «Արա-րատեան ընկ.»-ը, այնպէս ալ «Կիլիկիան ընկ.» կազմուած և արդիւնները տալ սկսած էր։ Այդ ժամանակները Պօլսի Սուլթանիէն դրոցի հայ ուսանողներու մէջ ևս բարի նախաձեռնութեամբ ընկերութիւն մը կազմուեցաւ «Դպրոցասիրաց» անունով։

Երբ այդ ընկ. անդամներն աւարտեցին Սուլթանիէն, սկսեցին ամուր հիմերու վրայ դնել, ընդարձակել իրենց գործու-նէութիւնը։ Այդ ընկերութեան հիմնադր-ներն էին պ. Մկրտիչ Սարգսեան Տրա-պիտին մէջ յատուկ կանոնաւոր դպրոց մը բացաւ և իր գործունէութեամբ ընկերու-թեան մեծ զօրք տուաւ։ «Դպրոցասիրաց» ընկերութիւնը որոշեց երեք դպրոց բանալ՝ միին Արաշկերտ, երկրորդը Բուլանջի, եր-րորդը Մուշ։ Արաշկերտի դպրոցն անհրա-ժեշտ նկատուեցաւ, վասնզի 1879-ին գաղ-թականները հետզհետեւ կը վերադառնային. ուստի Վարժապետեան պատրիարքի միջ-նորդութեամբ յարաբերութիւն մտաւ Գէորգ Կ. կաթողիկոսի հետ, որով նոյն 17,000 ր. տոկոսը յանձնուեցաւ «Դպրոցասիրաց» ըն-կերութեան՝ Արաշկերտի մէջ ընդմիջա-դպրոց պահելու համար։ Ընկ. վարդապետն կողմէ պ. Մ. Սարգսեան տեսուչ կարգուե-ցան։ Հայաստանի մէջ բացուելիք դպրոց-ներու։ Նա շտապեց մեկնեցաւ Արաշկերտ, պատեցաւ Լարաբիլիսէ, Իւլիկիսէ, Բայա-զետ և բացուելիք դպրոցի յարմար վայր գտաւ։ Արաշկերտի Թոփրակ-Վալէ տանը (հին Վաղարշակերտ), վանդի Բայաբիլի-միճակին մէջ այս գաւառակը թէ հայաշատ էր և թէ ժողովուրդը շատ աղքատ դրու-թեան մէջ։

Տեսչի պահանջմամբ ընկ. վարդապետը դիւ հետաքրքիր առաջ ուսուցչի հրաւերից Արաշկերտ։ 1879 յուլիս 29-ին մեկնեցաւ և պ. Մ. Սարգսեանի կարգադրութեամբ դպրոցը բացի, որ նախ 30, ապա հետզ-հետէ 130 հոգիին հասաւ աշակերտաց թիւը, որոնցմէ 40 նաաւարկ ուշակներն էր շը-շակայ գիւղերէն աւանի մէջ հաստատուե-լով դպրոց յանձնակցին։

Հեռաւոր անձանք խորհրդով և Վարժա-պետեանի շնորհերով մի տարի յետոյ «Դպրոցասիրաց», «Արարատեան» և «Կի-լիկիան» ընկերութիւնները դարձան «Միա-ցեալ ընկերութիւն», որն աւել ևս ըն-դարձակեց իր գործունէութեան ասպարէզն և դպրոցներուն թիւն աւելցուց։ Այդպիսով 17,000 ր. տոկոսները ցնացին «Միացեալ ընկերութեան» արամագործութեան տակ, որը Արաշկերտի դպրոցը փայտու վիճակի մէջ դրաւ։ Նոր յարմար դպրոց մը շը-շակէ։ 1883—84-ին Քրանսթրէնի և Թուր-քիէնի ուսուցչի հրաւերուեցաւ պ. Գէորգ Ձիլիկիւրեան, իսկ այնուհետ Մ. Թորո-սեան, Տուսուկեան, Հայաճեան և այլ կարող ուսուցիչներ հեռավար երաբ յանդիմանել «Միացեալ ընկ.» ընդմիջա-կուղարկել դպրոցական ամեն պիտոյը, որ առհասարակ աշակերտաց ամենուն ձրի կը տրուէր. բացի դասական գրքերէն ու գործիքներէն՝ մեծ քանակութեամբ գրքեր, լրագրեր, երգեթի-ւն զեղծարար կուղարկուէին։ Ուսուցչներու ուսուցիչներ ամեն մի անձի կը տրուէին. շատ անգամ կարիք ունեցող ժամանակէն առաջ ևս կը ստանար Աւագ ուսուցչի «Միաց. ընկ.» անունն զրաժ փոխանակա-գիր ուղարկելի դրամ էր. շատ անգամ ա-ռաւարակները կը խնդրէին մեզ դրամ

տալ, որ անոր տեղը փոխանակաւոր տանը։ Այսպէս՝ Արաշկերտի դպրոցի ծախքը, որ 4—5 տարի իմ ձեռքով կատարուած է, 180—200 ոսկոյ կը հասցնէր, որո. 90 ոս-կին յիշեալ 17,000 ր. տոկոսն էր։

1887—88-ին «Միաց. ընկ.» պաշտպա-նութեան տակ բացուեցաւ «Հայուհեաց ընկ.» օրիորդաց դպրոցը. այնուհետև ևս և կին փոխադրուեցանք այդտեղ և շարու-նակեցինք մինչև 1890։ Այդ ժամանակ եր-կիրը սարսափելի դրութեան մէջ էր. ևս ստիպուած էի խոյս տալ։ Տուսուկեան, Մարգարեան և այլ ուսուցիչներ Բայաբի-րի բերդի մէջ բանարկուեցան։ Այնուհետև դպրոցն սկսաւ հեռագնալ իր նախկին փայ-լը կորսնցնել. երբեմն զոց, երբեմն բաց՝ կաղնի կաղ շարունակեց մինչև եկեղեցա-կան կալուածներու դրաւումը, երբ սիւսը չէր կարող այդ գումարն ուղարկել։ «Միաց. ընկ.» դադարած էր արդէն, որով ինչպէս Արաշկերտի, այնպէս ալ ընկերութեան 46 դպրոցները զոցուեցան։

Եկեղեցական գոյքերու վերադարձումէն յետոյ Արաշկերտի ուսուցիչներէն քանի նա-մակները ստացաւ, որ միջնորդէին սիւսի և առաջ, փութացնել այդ փողի առաքումը, մի անգամ ևս այդ ժամին ժողովուրդէն հան-դարուեցին։ Այդ ժամանակի նախորդ-կային, նա ևս սիւսիցն։ Վերջինի կաթնքան այդ հանդարտութիւնը՝ փողի մի մասը բանկին ստացած և ուղարկած էր ըստ սո-վորականի միջնադարութեան ձեռքով Պօ-լսոյ դեսպանին, որն ևս յանձնելու էր պատրիարքին. ապա միացեալ ևս ուղար-կեց. 2 անգամը 2000 ր. աւելի գումար մի, որը կարծեմ 4—5 ամեն պատրիարքի ձեռքն հասաւ. սակայն նոյն տարին դպրո-ցը դարձեալ փակ մնաց և կը շարունակէ մնալ մինչև օրս. իսկ ուսուցիչներն ալ ցարդ չեն ստացած իրենց նախկին ուսու-նիչները. այդ էր պատճառը, որ հանգուցեալ կաթողիկոսը կը կասկածէր պատրիարքին վրայ և ինձ խորհուրդ հարցուց՝ թէ ինչպէս կարելի է վերականգնել Արաշկերտի դպրո-ցը առանց պատրիարքի հնդկութեան։

Այժմ, երբ երկիրը ազատութեան յոյսեր կը ցոյցնէ և սահմանադրութիւնը պիտի հաստատուի, ևս առաւել կարեւոր է յառաջ մղել դպրոցական գործը. հետեւապէս ան-մատութիւն պիտի լինի ձեռք տալ մի գու-մարի, որ երկար տարիներ սրբագործուած է որոշ ու բարձր գաղափարի մը համար։ 17,000 ր. խնդիրը առանձնակ տարիներ ա-ռաջ արդէն որոշուած է և արդ անհրաւեացի պիտի լինի նոր կարգադրութեամբ մի այլ գաղափարի յատկացնել, որի դէմ միայն իր բողոքին ձայնը կարող է հնչեցնել ամբողջ Բագրեանդին ժողովուրդը։

Ս. Հայկունի

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐԻ ԸՆԴՏՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիայում արդէն սկսել են կաղարկ կաթողիկոսական պատգամաւորների ընդ-րութիւնը։ Ինչպէս գիտենք, Եգիպտոսի թիւի ընտրեց պատգամաւոր պ. Միքայ Զեքարիայ Սեբաստիայի թիւի ընտրել է պատգամաւոր ոչ նուազ յայտնի ազգային գործիչ դոկտոր Ն. Տաղաւարեանին։ Զմիռ-նիայի թիւի պատգամաւոր ընտրել էր Կ. Պօլսի յայտնի հայ փաստաբան Գրիգոր Զօհրապէ Բէնիդուր, բայց սա հրաժարված լինելով երկրորդ անգամ պատգամաւոր ընտրվել է ներքինեան դպրոցի ուսուցիչ պ. Յ. Տէր-Միքայել, որ առաջինում եղել է տեսուչ Զմիռնիայի Մեքարիան հայոց դպրոցի և ծանօթ է այգազի հայ ժողովուրդին։ Այժմ էլ «Գործ» թիւից հա-ղորդում է, որ Տրապիզոնի թիւի կողմից պատգամաւոր է ընտրված ներքինեան դպրոցի տեսուչ պ. Ա. Ահարոնեանը։ Որ-քան էլ մենք ողջունում ենք պ. Ահարո-նեանի ընտրութիւնը, որովհետև նրա հա-յեացները և ուղղութիւնը կաթողիկոսա-կան հարցում համապատասխան են «Մաշ-կի» հայեացքներին և ուղղութեան, բայց ցանկալի էր, որ Թիւրքիայի մեւս թի-ւերը պատգամաւորներ ընտրելի և ու-ղղութիւնը Թիւրքիայից, որպէսզի կարելի լինէր իմանալ Թիւրքիայի հայ ժողովրդի իրական տրամադրութիւնը և ցանկութիւն-ները կաթողիկոսի և առհասարակ հայոց եկեղեցու վերաբերմամբ։

ՓՈԽՈՒՆԴԻՔ ՎԵՐԱՄԱՐՁԸ

Կովկասի հ. բնկերութեան ամսին 24-ի արտակարգ ժողովում մեր թիւերայն գաղ-թականների վերադարձը փութով դիւրաց-նելու շատ կարեւոր խնդիրն էր շարված։

Անյետաձգելի կարեւոր քանի դեռ ձեռք չէ ինչ մեր հայրենի բարձրաւարակի վրա և տեղի ունեցած տեսելի յղաշարժումի միայն արշալոյսի վարդապետը շրջել է ա-ռաւել ծաւալ առած, մեր առաջապիտե-կայքների վերադարձը փութացնելու հա-մար հոգածու մարմին հաստատելու և ա-նհրաժեշտ արագ միջոցներ հայթայթելու կարիքն էր՝ այդ ժողովի առջև դրված։

Ի հարկէ այդտեղ ամեն մի ժողովականի աչքը ու մտքը առջև նկարվում էր հա-րաւոր ուսկին և նաև աղքատիկ կնոջ լու-ման Բայց, և որովհետև մինչև առաւել չու-րեմէ սպասողի հոգին էր քաղվել ժողովականների ամբողջ թափով ընկան նախ այն և այն հայտատուութեան ձեռքի

տակ գտնվող շրաշղջիկների վրա, այն է՝ նոյն բարեգործականի գաղթականների անունով յանձնված փոքրիկ գումարի, նպաստամատուց յանձնաժողովի տրամա-դրութեան տակ գտնվող գրամների, հայրի-կեան կողմէ ֆոնդի, էլիմիանի սինդի-գանաւարկում Արաշկերտի գաղթականների անունով իբրեւ միացող վաղուց ի վեր պահվող ու տոկոսով աճող մի երկու տաս-նեակ հազարների վրա։

Ինչ խօսք որ առաքելութիւններ եղան այն և այն գումարի նկատմամբ, թէ ան-թոյլատրելի է խառնրեցնել իր իսկական նպատակից այս և այն յատուկ գումարը։

Բայց «հարկ դրուել լուծանէ» մի ծանու-ցեալ կենսական անցիմադրելի պայման հայ. դարձեալ մի օրէնք՝ անժխտելի պա-հանջի դեպքում։ Եւ ժողովականներից մեկը օրինակ բերեց Նորմեանի շարժումը նրա պատրիարքութեան օրով, Աւագաբիւրի ղուսնամարանի անունով նրա մօտ աւանդ գտնվող գրամի վերաբերմամբ, որ նա մի օր բաշխեց Պօլսում հրկիզեալների և իր սովորական առողջամիտ և շոյա պատրաս-տաբանութեամբ ջրեց խղճափառների ա-ռաքելութիւնները։

Ներկայ դեպքում եթէ այս և այն գու-մարի նկատմամբ առաքելութիւններն ան-յարթելի ներկայանան—որպէս օրինակ, Նորմեանի անունով հիմնադրամը (ֆոնդը), հակառակ նոյնիսկ Նորմեանի մասին բեր-ված օրինակի, անկաշարժելի նկատվի—գուցէ ընդունելի լինի հետեւալ առաջարկը՝ տալ այդպիսի գումարները վերադարձուցման պայմանով։

Այժմ անհրաժեշտ է նկատվում, շատ ստիպողական հանգամանքներ աչքի ա-ռաւ, անհրաժեշտ արագ գործողութեամբ մեր եղբայրների վերադարձը փութացնել։ Ուստի պատրաստ դրամներն առձեռն օգ-նութիւն են։ Ապա վրա կը հասնին ժողո-վելի նուէրները, և այս աղբյուրից իր տե-ղը կը վերադարձվի իւրաքանչիւրը փոխու-ված գումարների։

Ա. Մ Եղեկեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱՌՈՒՑ

(Սեպ. 29-ը.)

Գումակը շրջապատող լեռների արդէն ծածկվել են ձիւնով։ Ժիւրէ Գումակի օդը թափվել են ցրտացրել է. այսպէս ուրեմն ձիւնի զաւր առողջապահական տեսակէտից վրա է, իսկ գիւղացիները դեռ բողոքում լուր չեն սկսել երաշտի պատճառով, այժմ ձիւնի զաւր սրանց էլ է դիւրութիւն տալիս։

Գումակի հայկական մասում խօրեան չը կայ, իսկ թիւրքական մասում հաւա-նաւ գտնի է ամուռն։ Մօրեայով վարակ-ված են և Զաղաթի գաւառի մի քանի գիւղեր, որտեղ առատապէս հնձում է։ Գաւառական բժիշկ պ. Սարգսեանը շը-շում է թուրք գիւղերը, բայց մեծադիմերի թիւը չէ պակասում։

Մեկը.

Դաղաթի 29 սեպտեմբերի Մօրեան մեր գաւառում պատրաստի հող է գտնի և գտնի է ամուռն, ամենափա-ված գիւղը կարելի է հաժարել Եւթուղիին Դուշին. քանից որ ինչի հողի մեծն է։ Ամսին 28-ին Զաղաթում հողին յանձնեցին Դուշինում խօրեայով մեռած մի ստրա-նիկին։ Զաղաթի միւս գիւղերում ևս մե-ռողներ ևս լինում, բայց նրանց այլ հե-ռադուրեւներով չուան են ցոյց տալիս։

Մեր սարերն և ծածկվեցին ձիւնով։ Հայկական գիւղերում սկսել են վարը. ա-ղբյուրներ երաշտը շարունակվում է, բայց և այնպէս գիւղացին վարում և ցանում է։ Սե-Քար և Աղաթիւր գիւղերում տաւարի ծանախար շարունակվում է։

Մեղքիսեղէկ բա՛ն.

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Մօսկվա, 22 սեպտեմբերի Օգոստոսի 24-ից, մի ամբողջ ամիս, Մօսկվայի հայ գաղութի զաւ

